

### 3.3. Վերջից լուծվող խնդիրներ (1-2 քայլով)

#### Երեխայի հետ զբաղվողին




1. Երկու զամբյուղում խորանարդներ էին: Երբ առաջին զամբյուղից 5 խորանարդ երկրորդի մեջ դրեցին, երկրորդում 18 և առաջինում 10 խորանարդ եղավ: Սկզբում ամեն զամբյուղում քանի՞ խորանարդ կար:

Եկ առանձին-առանձին զամբյուղների խորանարդները հաշվենք: Առաջին զամբյուղից 5 խորանարդ հանել են, այսինքն՝ խորանարդները 5-ով պակասել են ու դարձել 10-ը, նշանակում է սկզբում այդտեղ և՛ հանած 5-ն է եղել, և՛ մնացած 10-ը: Այսինքն՝ **15 խորանարդ** ( $10 + 5 = 15$ ):

Երկրորդ զամբյուղի մեջ 5 խորանարդ են դրել, այսինքն՝ խորանարդները 5-ով ավելացել են ու դարձել 18-ը, նշանակում է սկզբում այդտեղ եղել է 18-ից 5-ով պակաս, այսինքն՝ **13 խորանարդ** ( $18 - 5 = 13$ ):

2. Եթե մտապահածս թիվը 10-ով փոքրացնեմ, արդյունքին 15 ավելացնեմ, 55 կստացվի: Ի՞նչ թիվ եմ մտապահել:

Մտապահածս թիվը չգիտեմ, քայց գիտեմ՝ հաջորդաբար կատարված գործողությունները (-10, +15) և վերջում ստացված արդյունքը՝ 55: Եկ վերջից քայլ առ քայլ վերադառնանք՝ հակառակ ուղղությամբ, հերթականությամբ (վերջից-սկիզբ) հակառակ գործողությունները կատարենք: 55 է ստացվել, երբ ինչ-որ անհայտ թվի 15 ենք ավելացրել, այսինքն դրանից առաջ եղել է 55-ից այդ 15-ով պակաս՝ 40: Մի քայլ ետ գնացինք: Էլի մի քայլ ետ գնանք: 40 ստացվել է, երբ մտապահածս թիվը 10-ով փոքրացրել են, այսինքն այդ գործողությունից առաջ եղել է և՛ այդ 10-ը, և՛ մնացած 40-ը, ուրեմն՝ 50: Մտապահածս թիվը **50-ն** է:



## Արի խնդիր լուծենք

- 1.** Բակուն 2 շարքով մեքենաներ էին կանգնած: Առաջին շարքից 4 մեքենա երկրորդ շարք տեղափոխվեց: Երկրորդ շարքում 16 մեքենա եղավ, իսկ առաջին շարքում՝ 12: Սկզբում ամեն շարքում քանի՞ մեքենա կար:

Մանուկյան, Խաչատրյան, 19 դեկտեմբեր՝ Բեյրութ, 15:

- 2.** Կարենն ու Արմենը մատիտներ ունեին: Կարենը 8 մատիտ Արմենին տվեց: Արմենի մոտ 30 մատիտ եղավ, իսկ Կարենի մոտ՝ 12 մատիտ: Սկզբում տղաներից ամեն մեկը քանի՞ մատիտ ուներ:

Մանուկյան, Բակբազ, 50 դեկտեմբեր՝ Բեյրութ, 55:

## Ազատ նավարկություն

(Եթե խնդիրները լուծելիս դժվարանաս, վերևում լուծված խնդիրներին նայիր: Կարդա, ուշադիր մտածիր ու խնդիրը հաստատ կլուծես:)

- Երկրորդ տուփից 4 գնդիկ առաջինի մեջ գցեցի: Առաջին տուփում 12 գնդիկ եղավ, իսկ երկրորդում՝ 6 գնդիկ: Սկզբում ամեն տուփում քանի՞ գնդիկ կար:
- Առաջին ծառից 6 ծիտիկ թռավ, նստեց երկրորդ ծառին: Երկրորդ ծառի վրա 20 ծիտիկ դարձան, իսկ առաջինի վրա՝ 10 ծիտիկ: Սկզբում ամեն ծառի վրա քանի՞ ծիտիկ էր նստած:
- Առաջին զամբյուղից 10 խնձոր երկրորդի մեջ դրեցի: Երկրորդ զամբյուղում 12 խնձոր եղավ, իսկ առաջինում՝ 2 խնձոր: Սկզբում ամեն զամբյուղում քանի՞ խնձոր կար:
- Սրահում սեղաններ էին դրված: Երբ առաջին շարքից 12 սեղան երկրորդ շարք տեղափոխեցին, երկրորդ շարքում 40 և առաջինում 20 սեղան եղավ: Սկզբում ամեն շարքում քանի՞ սեղան կար:



5. Առաջին դարակից 20 գիրք երկրորդ դարակը դրեցի: Երկրորդ դարակում 32 գիրք եղավ, իսկ առաջինում՝ 10 գիրք: Սկզբում ամեն դարակում քանի՞ գիրք կար:
6. Գահլիճի առաջին շարքից 10 աթոռ երկրորդ շարք տեղափոխեցինք: Երկրորդ շարքում 25 աթոռ եղավ, իսկ առաջինում՝ 10 աթոռ: Սկզբում ամեն շարքում քանի՞ աթոռ կար:
7. Իմ փողից 200 դրամ եղբորս տվեցի. նա 650 դրամ ունեցավ, իսկ ես՝ 700: Սկզբում յուրաքանչյուրս ինչքա՞ն փող ունեինք:
8. Եթե մտապահաձու թիվը 25-ով մեծացնեն, արդյունքին 10 ավելացնեն, 60 կստացվի: Ի՞նչ թիվ են մտապահել:
9. Եթե մտապահաձու թիվը 5-ով մեծացնեն, արդյունքը 2-ով բազմապատկեն, 20 կստացվի: Ի՞նչ թիվ են մտապահել:
10. Եթե մտապահաձու թիվը 30-ով փոքրացնեն, արդյունքից 20 հանեն, 15 կստացվի: Ի՞նչ թիվ են մտապահել:
11. Եթե մտապահաձու թիվը 20-ով փոքրացնեն, արդյունքին 10 ավելացնեն, 50 կստացվի: Ի՞նչ թիվ են մտապահել:
12. Եթե մտապահաձու թիվը 15-ով փոքրացնեն, արդյունքին 20 ավելացնեն, 60 կստացվի: Ի՞նչ թիվ են մտապահել:
13. Երկու թփի վրա ծիտիկներ էին նստած: Առաջին թփից 6-ը թռան հեռացան, իսկ երկրորդ թփից 7-ը առաջինին նստեցին: Առաջինի վրա 14 ծիտիկ դարձավ, իսկ երկրորդի վրա՝ 12 ծիտիկ: Սկզբում ամեն թփի վրա քանի՞ ծիտիկ էր նստած:
14. Գանձանակիցս 200 դրամ հանեցի և ռետին գնեցի: Հետո մայրիկս տուփիս մեջ 100 դրամ զցեց: Դրանից հետո հաշվեցի՝ տուփում 350 դրամ կար: Եթե ռետին չգնեի, տուփիս մեջ ինչքա՞ն փող կլիներ:

